

Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող՝ 97/17/ԵՀ հրահանգը փոփոխելու և լրացնելու մասին Հանձնաժողովի 1999 թվականի փետրվարի 26–ի 1999/9/ԵՀ հրահանգը կենցաղային սպասք լվացող մեքենաների էներգապիտակավորման վերաբերյալ

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

Պաշտոնական տեղեկագիր L056, 04/03/1999թ., էջ 0046 - 0046

Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող 97/17/ԵՀ հրահանգը փոփոխելու և լրացնելու մասին Հանձնաժողովի 1999 թվականի փետրվարի 26–ի 1999/9/ԵՀ հրահանգը կենցաղային սպասք լվացող մեքենաների էներգապիտակավորման վերաբերյալ (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Կենցաղային տեխնիկայի կողմից սպառվող էներգիայի և այլ ռեսուրսների վերաբերյալ՝ պիտակավորման և արտադրանքի մասին ստանդարտ տեղեկությունների միջոցով նշում կատարելու մասին» Խորհրդի 1992 թվականի սեպտեմբերի 22-ի 92/75/ԵՏՀ հրահանգը, մասնավորապես դրա 9–րդ հոդվածը,

քանի որ Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող Հանձնաժողովի 97/17/ԵՀ հրահանգը կենցաղային սպասք լվացող մեքենաների էներգապիտակավորման վերաբերյալ,

քանի որ չափման մեթոդների մշակումն ու ընդունումը հետաձգվել է (ԵՆ 50242). քանի որ չափման ներդաշնակեցված ստանդարտի բացակայության դեպքում մատակարարների համար անհնար է կատարել 97/17/ԵՀ հրահանգին համապատասխան ունեցած իրենց պարտականությունները. քանի որ, հետևաբար, այդ Հրահանգի կիրառումը պետք է հետաձգվի,

քանի որ սույն Հրահանգով նախատեսված միջոցառումները համապատասխանում են 92/75/ԵՏՀ հրահանգի 10–րդ հոդվածի համաձայն ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

97/17/ԵՀ հրահանգի հոդված 4(1) շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1. Անդամ պետությունները պետք է ընդունեն և հրապարակեն սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերն ու վարչական ակտերը մինչև 1999 թվականի փետրվար 28-ը: Նրանք պետք է այդ մասին անմիջապես տեղեկացնեն Հանձնաժողովին: Նրանք պետք է կիրառեն այդ դրույթները 1999 թվականի մարտի 1-ից:

Սակայն անդամ պետությունները թույլ են տալիս մինչև 1999 թվականի հուլիսի 31-ը՝

-արտադրատեսակների շուկայահանումը, վաճառքը և (կամ) ցուցադրումը և

- հոդված 2 (4) հոդվածում նշված տպագիր նյութերի տարածումը,

որոնք չեն համապատասխանում սույն Հրահանգին:

Երբ անդամ պետություններն ընդունում են 1-ին ենթապարբերությամբ նշված միջոցներ, դրանք պետք է պարունակեն սույն Հրահանգին կատարվող հղում կամ դրանց պաշտոնական հրապարակման պահին պետք է ուղեկցվեն նման հղումով: Անդամ պետությունները որոշում են նման հղում անելու ձևը:

Հոդված 2

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո երրորդ օրը:

Հոդված 3

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1999 թվականի փետրվարի 26-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Քրիստոս ՊԱՊՈՒՏՍԻՍ

Հանձնաժողովի անդամ

1) ՊՏ թիվ L 297, 13.10.1992թ., էջ 16:

2) ՊՏ թիվ L 118, 07. 05. 1997թ., էջ 1: